ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 սեպտեմբերի 2018 թվականի N 283-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 27-Ի N 266 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի, «Հանրակրթության մասին» օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարի 2010 թվականի մարտի 18-ի N 113-Ն հրամանի 1-ին կետով հաստատված կարգի 15-րդ կետի՝ **որոշում եմ.**

1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի 2010 թվականի հուլիսի 27-ի *«Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության պետական հանրակրթական ուսումնական հաստատություններում խորհուրդների անվանական կազմը հաստատելու և առաջին նիստերը գումարելու մասին»* N 266 որոշման 1-ին կետով հաստատված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) 31-րդ կետում՝ «Աբովյանի N 2 հիմնական դպրոց» բաժնում ***«Քալանթարյան Հայկ»*** բառերը փոխարինել ***«Մանուկյան Անի»*** բառերով,

2) 40-րդ կետում՝ «Գառնի բանավանի հիմնական դպրոց» բաժնում ***«Քալանթարյան Հայկ»*** բառերը փոխարինել ***«Ցուգունյան Պապիկ»*** բառերով,

3) 44-րդ կետում՝ «Բալահովիտի Ի. Վիրաբյանի անվան միջնակարգ դպրոց» բաժնում ***«Քալանթարյան Հայկ»*** բառերը փոխարինել ***«Չիլինգարյան Անի»*** բառերով,

4) 83-րդ կետում՝ «Նոր Երզնկայի միջնակարգ դպրոց» բաժնում ***«Քալանթարյան Հայկ»*** բառերը փոխարինել ***«Գրիգորյան Արմեն»*** բառերով:

2. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչությանը՝ սույն որոշման մասին իրազեկել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետարանի ենթակայության «Աբովյանի N 2 հիմնական դպրոց», «Գառնի բանավանի հիմնական դպրոց», «Բալահովիտի Ի. Վիրաբյանի անվան միջնակարգ դպրոց», «Նոր Երզնկայի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպությունների կառավարման խորհուրդներին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ռ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

2018 թվականի սեպտեմբերի 27
ք. Հրազդան